



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1901

ԹԻՒ 4

“ՈՂՋՈ՞ՅՆ ՁԵՁ”

Գալիլեայէ Յիսուսի ետեւէն գացող կիներուն ամենէն մեծ ուրախութիւնն էր ծառայութիւն ընել անոր նիւթական պէտքերը հոգալով: Խոնարհ գործ մըն էր անոնց մատուցած ծառայութիւնը, բայց ուրախութեամբ կը կատարէին: Յիսուս կը քարոզէր, հիւանդները կը բժշկէր, գեւեբը կը հանէր, մեռելները կը յարուցանէր: Մինչեւ անգամ տասներկու ուսուցիչներուն և եթեթանասուն աշակերտներուն տրուած էր հրաշք գործելու կարողութիւն, բայց ինչ որ այս խոնարհ կիները կրնային ընել, էր կերակուր պատրաստել իրենց Տէրոջ և հոգ տանիլ անոր զգեստներուն և սակայն անոնց սէրը դէպ իրենց վարդապետը այն աստիճան մեծ էր որ ուրախութեամբ կը կատարէին ունեւան որ անոր հանգիստը կ'աւելցնէր և իրենց անոր ներկայանալու միջոց կ'ըլլար յաճախ: Բայց անոնց այդ ուրախութիւնը




հոտ խոնկերով, և այդ նպատակով զերեզմանն եկած էին: Բայց փոխանակ անոր մարմնին՝ գտան լուսափայլ հրեշտակ մը, որ ըսաւ անոնց թէ Անիկա յարութիւն առած է: Այսպիսի բարի լուր մը չէին կրնար իրենց մէջ պահել այն կիները, որոնք ապշեցան զանիկա լսելով, ուստի աճապարելով վազեցին աւետիսը առաքեալներուն հաղորդելու: Բայց միթէ անոնք կրնային հաւատալ այսպիսի զարմանալի բանի մը, մինչև անգամ լսելով մէկէ մը որ գերմարդկային երևոյթ ունէր: Անոնք երկար ատեն տարակուսանքի մէջ չթողուեցան սակայն, վասն զի մինչ կ'աճապարէին երթալու, Յիսուս պատահեցաւ անոնց, և խօսեցաւ բառեր զորոնք թերևս շատ անգամ լսած էին անոնք անոր շքով ունեցնելէն, “Ելէ՛ք յո՛յն ձեզ” Սոյն ատեն իրենց ուրախութեան և մեծարանքի զգացումէն մղուած՝ փարեցան անոր ոտքերուն և երկրպա-

մէկ բան կար, վերջին նշան անոնց սիրոյն զոր կրնային ցուցնել, և այն էր պատել անոր մարմինը անուշա-

հաւանօրէն օր մը չանցաւ առանց միտք բերելու այս տեսարանը և մտածելու անոր վրայ ուրախութեամբ :

Եւ, սիրելի տղաք, եթէ մենք ալ սիրենք Քրիստոսը և ուզենք ծառայել անոր, որչափ որ կրնանք, օգնելով աղքատներուն և կարօտեալներուն, օր մը պիտի տեսնենք յարուցեալ Տէրը անոր երկնային փառքին մէջ :



ԳՈՐԾԻ ԶՇՐՈՒԹԵԱՄԻ ԿԱՏԱՐԵԼ ՍՈՐՎԷ


Ամէն մանչ և աղջիկ պէտք է որոշէ որ ճշդապահ ըլլայ : Դաս սորվելու առտեն նայէ որ անոր ճիշդ նշանակութիւնը հասկնաս, խօսելու ատեն բանին ճշմարտութիւնը ըսէ, գործելու ատեն ամէն բան ճիշդ ըրէ :

Երկու տղաք կ'աշխատէին վաճառատան մը մէջ : Մէկուն անունն էր Յովհաննէս և միւսինը՝ Յակոբոս : Իրենց գործերը միևնոյն էին : Իրենցմէ կը պահանջուէր որ առտուան ժամը 7 ու կէսին (Ը. Ե.) վաճառատունը գրտնուէին : Յովհաննէս միշտ հոն էր ճիշդ որոշուած վայրկեանին, կամ ժամանակէն քանի մը վայրկեան ալ առաջ : Իսկ Յակոբոս ժամանակէն այնչափ վայրկեան ետքը կու գար՝ որչափ կանուխ կու գար Յովհաննէս : Երբ Յովհաննէս վաճառատան ցուցափեղկին մէջ կը շարէր ապրանքները, ճշդիւ կը դնէր անոնց նշանները և գիները, բայց Յակոբոս կը մոռնար թիւերը անոնց վրայ դնել կամ սխալ գին կը դնէր : Ասոնք երկու տղոց տարբերութիւնը ցուցնող բաներէն երկուքն են միայն : Բայց ամէն օր և ամէն շաբաթ անոնց տարբերութիւնը աւելի կը մեծնար :

Յովհաննէս իր գործը ճիշդ և ուստի լաւ կը կատարէր, իսկ Յակոբոս՝ անհոգութիւնով : Երկար ժամանակ չանցած՝ Յովհաննէսի գիրքը բարձրացաւ իր պարտականութիւններուն հոգածու ըլլալուն շնորհիւ, իսկ Յակոբոս յանդիմանութիւն կը ըսէր իր անհոգ ընթացքին համար, և վերջապէս հանուեցաւ վաճառատունէն : Ըճշդապահ Յովհաննէս մեծցաւ հարստացաւ : Մարդիկ կը փափաքէին անոր հետ առևտուր ընել, վասն զի վստահ էին թէ ամէն կերպով գոհ պիտի մնային անկէ : Յակոբոս

այլ և այլ դիրքեր փորձեց, բայց կորսնցուց զանոնք իր պղտիկ բաներու մէջ ճշդապահ չըլլալուն համար : Եւ թէպէտ բոլորովին անյաշող չեղաւ աշխարհի մէջ, բայց չվայելեց այն երջանկութիւնը և յաջողութիւնը զոր Յովհաննէս վայելեց միևնոյն առիթներու մէջ :

Շատ բաներ կան որոնք ազնիւ ներկարգրի նպատակն են : Անոնց ցանկին մէջ ճշդապահութիւնը բարձր տեղ դիր :



ՎԻՔԻՍՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ
Վիքիօրիա իշխանուհին իբր 6' տա :



PHOTO BY HUGHES & MULLINS, NY 20

րի առաջ Անգղիոյ թագուհի եղաւ երբ մեռաւ անոր հօրեղբայրը, և միայն ծերունի անձինք կրնան յիշել անոր նախորդին օրերը : Եւ սակայն հարկաւ անիկա ժամանակաւ փոքրիկ աղջիկ մըն էր, թէպէտ անոր մանկութեան ժամանակը շատ կանուխ երևնայ այսօրուան տղոց : Ան ալ ուրիշ փոքրիկ շատ աղջիկներու պէս շատ կը սիրէր պուպրիկները (պէպէք), և կ'ըսուէր թէ մէկ անգամուն մինչև 132 պուպրիկ ունեցած է : Եւ անոր սիրելի զբօսանքներէն մէկն էր իր պուպրիկներուն հանդերձներ չինել : Անոնց

հոգ տանելուն համար էր որ այդպէս վարժուեցաւ և յետոյ եղաւ օրինակելի և տիպար մայր մը : Հայրը մեռաւ երբ ինք շատ պղտիկ աղջիկ մըն էր, և թէպէտ ստոյգ չէր թէ օր մը գահը պիտի բարձրանար անիկա, բայց հայրը սապէս ըսած էր անոր մօրը, « Հոգ տար անոր, վասն զի Անգղիոյ թագուհի պիտի ըլլայ : » Մայրը երբեք չ'հոռցաւ այս խօսքերը, և մեծ մասով իր մօր տուած խնամօտ կրթութեան պատճառաւ էր որ Վիքիօրիա թագուհին այնպիսի ազնիւ կին մը եղաւ : Մայրը առտուանց կանուխ կ'արթնցնէր զանիկա, կը կերակրէր պարզ և առողջարար կերակուրով, և տնէն դուրս կը զրկէր որ բաց օդին մէջ խաղայ : Վիքիօրիա շատ կը սիրէր ձիերը, և Անգղիոյ կիններուն մէջ ամենէն ճարտար ձի հեծնողներէն մին եղաւ : Չի հեծնալու այս զբօսանքը շատ ընդհանրացած է Անգղիացի կիններուն և աղջիկներուն մէջ : Բայց շատ հոգ կը տարուէր անոր դաստիարակութեանը մանաւանդ : Երբ տասնմէկ տարեկան եղաւ, կրնար խօսիլ Գաղղիերէն և Գերմաներէն իր մայրենի ընտելին չափ սահուն կերպով : Նաև սկսած էր ուսանիլ իտալերէն, լատիներէն, Յունարէն, Մաթեմատիք և Երաժշտութիւն : Շատ լաւ կ'երգէր և դաշնակ կը զարնէր, նաև սիրահար էր գծագրութեան և նկարչութեան : Կան բաներ զորոնք կրնանք սորվիլ մանկութենէն այս անձին որ այնքան երկար ժամանակ առաջնակարգ դիրք մը գրուեց Եւրոպայի քաղաքական կեանքին մէջ, և որ պիտի յիշուի բարին Վիքիօրիա

անունով :



ՄՈՒԹԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ
Ամերիկեան Աղջիկն Ժողովին Կոյրերու Ընթերցասրահին մէջ շատ անգամ կը տեսնուի սրտաշարժ բան մը, տասներեք տարեկան տղայ մը, որուն աչքերը կամաց կամաց բայց ստուգապէս կը կորսնցնեն իրենց տեսութիւնը : Ան տակաւին կարող է իր ճամբան գտնել սրահին մէջ և աղօտ կերպով որոշել դէմքեր, բայց գիտէ թէ շատ պիտի գայ ժամանակը երբ ամէն բան խաւար պիտի ըլլայ չորս դին : Եւ ուս-

տի ամէն օր կ'ընէ ապագային տրխու-
րութիւնը պակսեցնելու կարելի պատ-
րաստութիւնը: Ընթերցարարհի գրա-
տան մարդասէր տեսուչին օգնութիւ-
նովը ուռուցիկ գիրեր կարդալու կը
վարժուի, այն տեսակ գիրեր՝ որոնց-
մով շատ գիրքեր պատրաստուած են
կոյրերու համար: Իւ սրտաշարժ բան
է գիտել անոր փոքրիկ մասները որոնք
տակաւին այնքան վարժ չեն, և որոնք
կամաց կամաց կը շօշափեն դասին ե-
րեաները: Ասոնք դժուար դասեր ըլ-
լարու են, բայց տղան շատ զուարթ
է և, երևոյթէն դատելով, յառաջ կը
նայի առանց սոսկալու: Օր օրի ետեէ
կը մթերէ ապագային համար
ինչ որ իրեն ոսկիի գանձէն
շատ աւելի պատուական պի-
տի ըլլայ քիչ ատենէն, երբ
խառարը թանձրութեամբ իր
վրայ հասնի:

Մեզմէ քանի հոգի այսպի-
սի քաջութիւն և յարատու-
թիւն պիտի ցուցնէին ասանկ
պարագաներու մէջ: Արեւ-
սիրտ տղան, որ իր դժուար-
ին դասերը կը սերտէ, եր-
բեք չերողեր թէ ինք ինչ
քարոզ կը խօսի բոլոր զինք
տեսնողներուն:

**ՈՒՒԼԻ ԻՆՉՊԵՍ
ՉԵՐՄ ՄՆԱՅ ՍԱՌՆԷԼԷ**

Սկովտիոյ մէջ ոչխարներու
հովու աղքատիկ տղայ մը
բլուրներուն վրայ ձիւնի սաս-
տիկ փոթորիկէ բռնուեցաւ:
Երկար ատեն և քաջութեամբ
դիմացաւ, և ջանաց իր հօրը
դէպ ի տուն առաջնորդել իր
ճանցած ճամբու նշանները
դիտելով: Բայց ամէն բան
պարագա ելաւ, ձիւնը արագ արագ
կ'ընէր, և գիշերը վրայ չհասած՝ ճամ-
բաներու և շաւիղներու բոլոր հետ-
քերը աներեւոյթ եղան, և խեղճ Ուլի
ինքզինք առանձին գտաւ իր ոչխար-
ներուն հետ բլուրներուն մէջ: Երբ գի-
շերը մօտեցաւ, մահաբեր թմրութիւն
մը սկսաւ գալ աղին վրայ, որուն չէր
կրնար դէմ դնել: Երբեք պատասպա-
րան չկար: Ուստի իր ոչխարներուն
մէջ պառկեցաւ քնանալու և մեռնե-
լու համար, վասն զի տարակոյս չու-
նէր թէ ա'լ պիտի շարժնար երկրիս
վրայ: Խեղդուկ ձայնով աղօթք մը
ըրաւ օգնութեան համար, և քնացաւ:
Մինչ այնպէս պառկած կը մնար, ա-
ւելի ոչխարներ եկան հաւաքուեցան
չուրջը: Իրաւ զարմանալի կ'երևնայ որ

ոչխարներուն մարմիններէն արձակ-
ուած տաքութիւնը պահեց տղան սա-
ռելէ: Խուճի մը անձինք տնէն եկեր
էին տղան փնտռելու, և գտան զա-
նիկա տաք տասներկու ոչխարներէ
չըջապատուած: Ոչխարներուն բնագո-
ւազատած էր տղին կեանքը: Ասոնք
իրար տաքցնելով, տաքութիւն և
կեանք պահած էին անոր մէջ: Տղան
անկէ ետեւ շատ տարիներ ապրեցաւ,
և ինք պատմած է իր գլուխը եկած
այս դէպքը որ պատահած էր հիւսի-
սային ամառի բլուրներու կողերուն
վրայ կորսուած միջոցին:



ԵՏՈՒՐՔՏ Է.

Անգղիոյ նոր Թագաւորը գահուն ժա-
ռանգ ծնաւ: Եթէ անոր մայրը մե-
ռած ըլլար իր մէկ օրուան եղած ատե-
նը, ինք թագաւոր պիտի հրատարա-
կուէր, բայց կառավարութիւնը խնա-
մակալի մը ձեռքը պիտի յանձնուէր
մինչև որ անիկա 18 տարեկան ըլլար:
Աստուած իր ողորմութիւնով երկարեց
անոր բարի մօր կեանքը մինչև խոր ծե-
րութիւն, և անոր երէց որդին մինչև
39 տարեկան հասակը Գահաժառանգ
տիտղոսը կրեց: Հիմա հասած է իր
բարձր պաշտօնին հասուն տարիքի մէջ
և, այսքան երկար ժամանակ հանրային
գործերու մտացի դիտող մը ըլլալէն
ետքը, Բրիտանական ազգը իրաւունք
ունի այն վստահութեան զոր կը դնէ

անոր իշխանութեան իմաստութեան
վրայ: Թէպէտ Թագուհին արքայական
գործերը կատարեց մինչև իր կեանքին
վերջը, սակայն փոյթ չէր ընել շատ
երևնալ հանրութեան մէջ իր ամուս-
նին մահէն ետքը, և Ուէյլի իշխանը
յաճախ կը նախագահէր պալատին մէջ
տրուած ընդունելութիւններուն: Երի-
տասարդ իշխանը 1860 ին այցելեց Մի-
ացեալ Նահանգները և Քանադա, և
1873 ին՝ Հնդկաստան, ուր անոր ներ-
կայութիւնը և վարմունքին հմայքը շատ
օգնեցին զօրացնելու հաւատարմական
զգացումը պետութեան այդ բազմա-
մարդ մասին մէջ գտնուող միլիոնաւոր

հպատակներուն միտքերուն
մէջ: Իշխանը 1871 ին ծանրա-
պէս հիւանդացաւ ժանտա-
տենդով, և երբ աղէկցաւ,
մեծաշուք և փառաւոր հան-
դէսներ կատարուեցան Սր.
Պօղոսի Մայր եկեղեցիին մէջ
1872, փետրուարին: Իշխանը
ամուսնացաւ 1863 ին Տանի-
մարքայի Գրիսթիան Թ. Թա-
գաւորին երէց օջկան Ալեք-
սանարայի հետ: Ասոնք երեք
մանչ և երեք աղջիկ զաւակ
ունեցան: Ամենէն մեծ մանչը
մեռաւ 28 տարեկան, և ա-
մենէն պզտիկը՝ երբ միայն մէկ
օրուան էր: Ողջ մնացած որ-
դին, Եորքի Դուքսը, ծնաւ
1865 ին, և ունի երեք մանչ
և մէկ աղջիկ զաւակ: Էտուրտ
Թագաւորին երեք աղջիկնե-
րէն երկուքը ամուսնացած են:

ՓՈՔՐՈՎ ԵՄԱՆՈՂՆԵՐԸ

Տարիներ առաջ պզտիկ աղ-
ջիկ մը որ փափուկ և տկար
կազմուածքին համար դպրոց
կազմուածքին համար դպրոց
մը ունէր: Աղէկ չսեպուեցաւ սորվե-
ցընել անոր, բայց երբեմն երբեմն
թոյլ կը տրուէր պզտիկ նամակ մը գոց
ընել, և յետոյ իր մօրը նամակները
օրինակել, բայց մեքենայօրէն, առանց
բան մը հասկնալու: Գրուած գիրերը
հարկաւ նշանակութիւն մը չունէին
աղջկանը համար: Բայց անոր խնամատ,
դիտող աչքերը և ժիր, մանտարտիկ
մատները դիւրաւ կարդացուող գիրեր
կը գրէին: Տարի մը ետքը երբ աղջիկը
աւելի զօրացաւ, դպրոց զրկուեցաւ ու-
չուտով կարդալ և գրել սորվեցաւ ու-
սուցիչներէն սովորական կերպով: Տա-
րիներ անցան և պզտիկ աղջիկը չա-
փահաս եղաւ, բայց մինչև հիմա իր
գիրին ձևը այնքան նման է մօրը գիրին

ձեռն, որ անոնց կանոնաւոր թղթա- կիցները գրեթէ չեն կրնար իրարմէ որոշել անոնց գիրերը: Մօր գրութեան յատուկ բոլոր հանգամանքները առանց զգացուելու արժեքն փոխանցուած են: Ասիկա լաւ և պարզ բացատրու- թիւն մըն է թէ կանոն ընդունուած տպագրութիւններն ինչպէս մնայուն արդիւնք կ'ունենան:


Գեոսահասակ բարեկամներ, ձեզմէ ոմանք իրենց փոքրիկ նամանդներն ու- նին տան մէջ: պզտիկ մանջ մը կամ աղջիկ մը՝ որ իրեն մեծագոյն պար- ծանք կը սեպէ ընել և խօսիլ ինչպէս իր մեծ եղբայրը կամ քոյրը կ'ընէ և կը խօսի: Երբեմն ալ ձեր ընտանիքէն չեղող պզտիկ մըն ալ կը ջանայ ձեզ ընդօրինակել հաւատարմութեամբ, պզտիկ դրացի մը կամ մանուկ մը որ կը կարդայ նախակրթական դպրոցին մէջ, և որ հեռուանց կը զմայիլի ձեր վրայ և կ'ուսումնասիրէ ձեզ իբրև տա- ղանդաւոր անձեր քերականական և կամ բարձրագոյն դպրոցին մէջ ուր կ'ուսանիք:



Վ. Ի. Ք. Ռ. Բ. Ա. Գ. Ռ. Զ. Ի. Բ. Փ. Ա. Փ. Ռ. Ի. Ս. Ի. Ր. Ս. Պատուաւոր անձ մը, Պոսթընի մէջ նշանաւոր վաճառական, Ուայթ կըղ- գիին (Անգղիա) բնիկներէն էր: Իր տղայութեան ատենը յաճախ կը տես- նէր Վիքթորիա թագուհին և անոր ա- մուսինը, Ալպէրթ իշխանը, մինչ անոնք Օղպորնի բնակարանը կը գտնուէին:

Օր մը թագուհին և անոր ամուսին իշխանը հետևորդներով մէկտեղ կառ- քերով կ'անցնէին: Տղան և անոր քա- նի մը ընկերները որոնք ճամբուն վրայ կը գտնուէին, ցանկապատին քով քաշ- ուեցան հանդէսը դիտելու համար: ձեռք քովը բեռան կառք մը ճամ- բուն դիմացի կողմը տարուեցաւ ար- քայական խուրճի անցնելու տեղ բացուելու համար, որչափ որ կարելի էր: Եւ սակայն ճամբան նեղ էր, ուստի կառքերը իրենց անցած միջո- ցին քիչ մը ցանկապատին մօտեցան, և ահա յանկարծ թագուհին կառ- քին անիւր անցաւ յիշեալ պատանիին ոտքին վրայէն, որ հիմա Պոսթընի յիշ- եալ վաճառականն է: Պատանին գետինն ինկաւ, բայց չլացաւ: Իսկոյն իշխանը կառքէն վար իջնելով վերցուց գանիկա, և Վիքթորիա, Անգղիայ վե- հապետուհին, ալ իջնելով անձկու- թեամբ անոր քով ծնկան վրայ եկաւ: Ըուտով տեղեկացաւ թէ տղան ո՛ր կը բնակէր, և թէ տղին մայրը մեռած էր քանի մը օր միայն առաջ: «Իտե՛ղձ պզտիկ», գոչեց թագուհին, «ի՛նչ ցա- ւալի բան: անցեալ շարժու մայրդ մեռաւ, այս շարժու ալ դուն պիտի սպաննուէիր»:

Յետոյ անմիջապէս թագուհին կառք մը կանչեց և հրամայեց որ տղան տուն տարուի: բայց նախ ստակով լեցուց անոր ձեռքը իր քսակէն: Մինչ տղան տուն գացած միջոցին իր աչքերը ետ դարձուցած՝ արքայական կառքին կը նայէր, թագուհին շատ անգամ թաշ- կինակ շարժեց դէպ ի տղին կողմը: Հետեւեալ օրը աղին տանը դուռը զարնուեցաւ: Վիքթորիայի պիտու- պանն էր, զոր բարեսիրտ թագուհին զրկած էր վնասուած ոտքին վրայով տեղեկանալու համար:



ԾՈՎԸ ԻՆՉՊԵՍ ԱՂԻ ԵՂԱԻ (ՀԵ՛ Գ՛ Ե՛ Զ՛)

Շատ ժամանակ առաջ երկու եղ- բայրներ կային: Մէկը հարուստ էր և միւսը աղքատ: Ծննդեան տօնը հաս- նելու վրայ էր, բայց այս աղքատը բան մը չունէր իր տան մէջ իր Ծնունդի ճաշին համար: Ուստի եղբորը գնաց և անկէ բան մը խնդրեց: Հարուստը բարկացաւ երբ եղբորը խնդրքը լսեց: Բայց, ինչպէս ամէն մարդ նուէրներ կուտայ Ծննդեան տօնին ժամանակը, ան ալ իր աղքատ եղբորը խոզի եր- չիկ (սուճուգ) մը տուաւ և բուս, «Գնա, և ալ մի գար»: Աղքատը երջիկին հա- մար շնորհակալ եղաւ հարուստին, եր- չիկը թե՛ին ներքեն առաւ և գնաց դէպ ի տուն: Մեծ անտառէ մը պիտի անցնէր: Անտառին մէջտեղը տեսաւ ձերուհի մարդ մը որ փայտ կը կտրէր: «Բարի իրիկուն», բուս փայտահարին: «Բարի իրիկուն», պատասխանեց ձե- րուհին: «Գու՛ն աղուոր երջիկ մը ու- նիս թե՛իդ տակ: Ուրկէ՞ առիք»: Այն ատեն աղքատը բրաւ անոր պատմու- թիւնը: «Բարեբաղդութիւն եղաւ քեզի որ ինձի պատահեցար», բուս ձերուհին: «Գու՛ն այխարհիս ամենէն հարուստը կ'ըլլաս, եթէ այդ երջիկը գաճաճներուն երկիրը տանիս և ա- նոնց ծախես: Այդ երկիրն դուռը այս ծառին ներքեն է: Գաճաճները երջիկ կտր կը սիրեն, և քիչ անգամ ձեռք չը բերեն: Բայց ստակով մի ծախեր ատիկա: Ստակի տեղ ուզէ այն ձեռքի հին աղօրիքը որ դրան ետուր կը գտնուի: Ես քեզի կը սոր- վեցնեմ՝ զանիկա գործածելու կերպը»: Աղքատը շնորհակալ եղաւ իր նոր բա- րեկամին, որ ցուցուց իրեն ծառին ներքեի քարին ներքեի դուռը: Աղ- քատը այս դրան մէջէն մտաւ գա- ճաճներուն երկիրը: Հազիւ մտած էր, գաճաճները առին երջիկին հոտը և անոր եկան: Առաջարկեցին երջիկին փոխարէն ոսկի և արծաթ տալ, բայց մարդը բուս թէ միայն դրան ետեի հին աղօրիքը կ'ուզէր անոր փո- խարէն: Գաճաճները ապշած նայեցան և շարժեցին իրենց գլուխները: «Եթէ չէք ուզեր գնել, ես տուն կ'երթամ», բուս աղքատը: Բայց երջիկին հոտը լեցուցած էր գաճաճներու այխարհին ամէն կողմերը, և բոլոր գաճաճները վազեցին եկան և երջիկը գնել ուզե- ցին: «Անոր տուէք աղօրիքը», բուս

գաճաճներուն մեծը, արդէն կուտած է, և անիկա պիտի չկրնայ գործածել զանիկա: Տուէք անոր, վասն զի մենք պէտք է առնենք երջիկը»: Աղքատը առաւ աղօրիքը, որ երջիկին կէս մե- ծութիւնը չունէր, և նորէն ետ գնաց անտառը: Ծերունին անոր սորվեցուց գործածելու կերպը: Ժամանակը կէս գիշեր էր, և մարդը տուն վազեց: Կինը շատ ուրախ եղաւ էրկանը գա- լուն վրայ, ինչու որ շատ մտած և ա- նոթի էր: Ոչ կրակ վառելու փայտ կար և ոչ ուտելու բան մը: Կինը դառնապէս լացաւ երբ էրկը բուս թէ հին աղօրիքէն զատ ուրիշ բան բե- րած չէր: Մարդը սեղանին վրայ դրաւ աղօրիքը և սկսաւ դարձնել անոր կոթը: Ինք կ'ուզէր լոյս, կրակ և ու- տեիք մը: Կոթը դարձնել սկսածին պէս՝ վառուած մտ մը, լաւ կրակ մը և աղուոր ընթրիք մը ելաւ աղօրիքէն: Հետեւեալ օրը երբ անորիկ կ'անց- նէին, շատ զարմացան տեսնելով որ պա- տուհանները ապակի ունէին փոխանակ առաջուան փայտէ փեղկերուն: «Չար- մա՛նք», ըսին իրարու: «Շա՛տ զար- մանալի բան», բուս հարուստը ինք- իրեն, երբ երեք օր ետքը մեծ խըն- ճոյքի մը հրաւիրուեցաւ ժամանակա- աղքատ եղող եղբոր տան մէջ: Հա- րուստը այսպիսի ոսկեղէն և արծա- թեղէն պնակներ գնելու բաւական ստակ չունէր: «Ուրկէ՞ ստացար բոլոր այս բաները», հարցուց: Եղբայրը պատմեց գաճաճներուն և աղօրիքին վրայով: Եւ հարուստը նախանձեցաւ եղբորը բարեբաղդութեան վրայ: Ու- զեց փոխ առնել աղօրիքը, բայց եղ- բայրը չհաճեցաւ, վասն զի անտառին ձերուհին բուս էր որ երեք չծախէ կամ փոխ չտայ զանիկա: Քանի մը տարիներ ետքը աղօրիքին տէրը շքեղ դղեակ մը չինեց ծովեղբորը: Շատ հարուստ մարդ մը եկաւ տեսնել դըղ- եակը և զարմանալի աղօրիքը: Բուսե- ցաւ անոր թէ աղօրիքը ալ կ'աղայ: Ինք ալ կը գնէր կը ծախէր, և ուստի ուզեց աղօրիքը գնել: Բայց աղքատը ուզեց ծախել զանիկա: վաճառակա- նը կաշառեց ծառան, և այսպէս անոր ձեռքով գողցաւ աղօրիքը և զանիկա հետ առնելով նաեւ գնաց: Երբ ա՛լ չէր երևնար ցամաքը, բուս աղօրիքին: «Միայն աղ աղա»: Աղօրիքը սկսաւ աղ աղայ: Եւ երբ նաւը լեցաւ, վա- ճառականը բուս աղօրիքին որ ալ չաղայ: Բայց աղօրիքը շարունակեց աղայ, և նաւը ընկղմեցաւ: Հիմա ա- ղօրիքը ծովուն յատակն է և շարու- նակ ալ կ'աղայ, և այս է ծովուն ա- ղի ըլլալուն պատճառը:

Տարեկան բաժանորդագրին՝ 6 դր. արծաթ, կանիկ, ամէն տեղաւոր համար: Ամերիկայի Մեխիկոստաց ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Սմբագիր Լ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՐ ԳՈՅՈՅԻՆ
Ճինճանճըլու Եօգուշու, Ամերիկան Խա՛ն